ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИР
ОБЩИНА БАМБАКАШАТ

« 09 » Փետրվարի 2015թ. Թիվ 18

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊՐՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 30-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 03-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 35 թերթ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.14/1460-15
09 02 2015

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 03-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 2015 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 30 -Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 03-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի պահանջի կատարմամբ. համայնքի տվյալ տարվա բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում ծախսերի նկատմամբ գերազանցել է, որն անհրաժեշտ է բաշխվել որոշման մեջ նշված ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի ավագանու 2015 հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի 2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 30-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 03-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2015թվականի N 03-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

1. Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 30-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ

4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 30-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ

Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ ընդամենը ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 1128.4 հազ. դրամ, և ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 0.0 հազ.դրամ ուղղել օրենսդիր և գործադիր մարմիններ ,պետական կառավարում 01 բաժնի 1 խմբի 1 դասի 5122 հոդվածին ավելացնել 1128.4 հազ.դրամ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ